ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«09» դեկտեմբերի 2022թ. N ԱՄ/697-Ա

ք. Արմավիր

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N ԳՍ/15.2/32582-2022 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

**Որոշում եմ՝**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային

գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2023թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

09.12.2022

X

VERIFIED OCSP 09.12.2022 17:34:42 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**Մարզպետ՝**
**Է.Հովհաննիսյան**

*Հայաստանի Հանրապետության*

*Արմավիրի մարզպետի*

*2022թվականի դեկտեմբերի 02-ի*

*ԱՊ/697-Ա* *որոշման*

*Աշխատանքային խմբի կազմ*

| | |
|---|---|
| Խմբի ղեկավար՝ Ա.Այվազյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| *Անդամներ՝* | |
| Գ. Մելիքյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ |
| Ս.Մխիթարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Ջ.Սարդարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ |
| Կ. Մարգարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ |

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

Недействительная подпись

VERIFIED OCSP 09.12.2022 16:32:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023